ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.08.2020թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ Գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ոսկյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, մայոր Մ. Երամյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Դավթյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության ԳԿ վարչության ԳԿ 2-րդ բաժնի ավագ մասնագետ Ա. Հովհաննիսյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին դատարանի 20.07.2020թ. որոշման քննարկման մասին.
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 որոշման քննարկման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին դատարանի 20.07.2020թ. որոշման քննարկման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 17.08.2020թ. կայացած նիստում, հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին 20.07.2020թ որոշումը՝ համաձայն որի վերջինս որոշել է թիվ ԵԴ/17845/02/20 քաղաքացիական գործով պատասխանող՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի, երրորդ անձ՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ՝ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունները բավարարել՝ վերացնել ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2020թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝

«1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 10.06.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված սույն միջնորդության 1-ին կետով նշված որոշման կատարմանը», «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

- դադարեցնել 14.07.2020թ. N 5 Արձանագրությամբ արձանագրված՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/17845/02/20 Քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 23.06.2020թ. որոշման հետևանքով և դրա պահանջների կատարումից բխող՝ 14.07.2020թ. N 5 Արձանագրությամբ կայացրած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 որոշման քննարկման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

2.1 «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ 16.07.2020թ. ներկայացրել է բողոք՝ համաձայն որի վերջինս խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերացնել 14.07.2020թ. թիվ 5 որոշումը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 11.08.2020թ. (հրապարակվել է 13.08.2020թ.) թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/63 որոշմամբ բավարարել է «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական

Միավորում» ՓԲԸ բողոքը՝ այն է՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.07.2020թ. թիվ 5 արձանագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 17.08.2020թ. գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1) «Վրցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ՝ թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների մասով,

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի նիստի արդյունքները:

3.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատող՝ Գ. Ուստյան

Գնահատող՝ Դ. Դավթյան

Գնահատող՝ Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Ա. Հովհաննիսյան